

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց համադրություններ:
Ծառանկարները լինում են անվճար:
Խմբագիրը չի պահպանում հարկերը:
Խմբագիրը չի պահպանում հարկերը:

Խմբագրությունը բաց է առաջօրե 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Հայտարարությունները ընդունվում են ամեն լուրջով:
Հայտարարությունների համար գնում են
կապույտ թուղթի վրա 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, Հայոց թատրոնը, Նա-
մակ Ա. Պետերսբուրգից, Նամակ խմբագրիչ: Նա-
մակ խմբագրիչ: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, Թիֆլիսից, Գեորգիանի: Պարսկա-
ստան: ՀԵՌԱՎԵՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐ: ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, Նամակ թիֆլիսից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

I

Ինչպես յայտնի է, 1879 թվ. ամառը
կազմակերպված թիֆլիսում հայոց թատրոնա-
կան մշտական խումբը, Կ. Պոլսից հրաւիր-
ված երեք օպերային օգնություններ՝ օր. Աստ-
ղիկի և Սիրանուշի և պ. Աղամանյան: Թե
այդ առաջին տարուան սկզբին ամիսներում
որքան աջողություն ունեցան հայ ներկա-
յացուհիները, գոնեա բազմաթիւ այցելուներ
ունենալու կողմից, այդ պարզ է բոլորի հա-
մար: Հետեւեալ (1880) տարուան համար
հրաւիրվեցան թիֆլիս գարձաւ Կ. Պոլսից
նոր այտեր՝ օր. Նրանուհի և Վիրգինիա Գա-
րաքաշեաններ և պ. Մնակեան: Թեպէտ
այս նոր հիւրերից մանաւանդ պ. Մնակեան
շատ նշանաւոր դերասան է, բայց և այն-
պէս թատրոնը չունեցաւ նախընթաց տա-
րուան աջողութիւնը:

Ես այժմ չեմ կամենում մի առ մի թուել
այն բոլոր առիթները, որ սառեցրին ժողո-
վորը զէպի հայոց թատրոնը: Այդ պիտի
լինի իմ մի այլ յօդուածի նիւթ: Արդէն
շատ է խօսվել և գրվել զրա մասին, այն-

պէս որ ընթերցող հասարակութիւնը երեւի
լաւ յիշում է աչքի ընկնող առիթներից
գլխաւորը, որ մեր կարծիքով այն է, որ
խաղացած պիէսները մեծ մասով համա-
պատասխան չէին մեր կեանքին և մեր տե-
ղական կեանքից գրեթէ բոլորովին չը խա-
ղացվեցան առ ձեռն եղած պիէսները և
այդպիսով փակվեցաւ այդպիսի նոր պիէս-
ների աշխարհ զալու ճանապարհը: Այս
յօդուածի գրելուս ինձ առիթ տուեց օր.
Աստղիկի հեռանալը թիֆլիսից, Աստղիկի
որ այս երկու տարուան մէջ ապացուցեց
թիֆլիսում, որ հայ կինն էլ կարող է շատ
բարձր մարդկային զարգացումներ արտա-
յայտել թատրոնի բեմից:

Չեմ կամենում անպատեւել, ի հարկէ, մեր
թատրոնական խմբում եղած միւս օրիորդ-
ներին, բայց և այնպէս մի բարոյական պար-
տականութիւն եմ զգում ասելու, որ ոչ
միայն նոցանից ունի իր մէջ այնքան արժա-
նաւորութիւն, որքան մենք տեսնեք օր.
Աստղիկի մէջ, որ իր դերասանական հան-
ձարի հետ, հաստատուն կամքի և բարո-
յական համոզմունքների տէր լինելով, եղաւ
մեր թատրոնի համար շատ և շատ բարձր
իրան շրջապատող միջին և մնայլ միջո-
ւորի մէջ զեզելովով գործիչներից:

Որքան որ զեզելիկ է և բարձր թատրո-
նական գործը և նորա զարգացուցիչ և բա-
րեկրթիչ գորութիւնը հասարակութեան
համար, այնքան մեզանում դեռ ևս ասպա-
րիզում չենք տեսնում այդ մաքրիկ հա-
մապատասխան և նրանց իրագործող գոր-
ծիչներ: Ի հարկէ մենք դեռ այն աստի-
ճան զարգացած չենք, կարծիք չը կայ:

անկարելին չէ կարելի պահանջել: Բայց և
այնպէս մեր թատրոնական գործից իրոնց
հեռու պահող կրթված անձանց մէջ ևս
կարող եմ թուել բաւականաչափ մարդիկ,
որոնք աւելի և աւելի օգտակար կը լինեն
հայ թատրոնի գործին: Հարկաւոր է լաւ
զարգացման հետ միասին լինել ճշմարիտ,
անկեղծ և հաստատաւոր, ազգասէր և վերին
աստիճանի բարոյական մարդ: Եթէ ասպա-
րիզում լինեն այսպիսի յատկութիւններով
լի մարդիկ, անշուշտ մեր թատրոնը աւե-
լի և աւելի պտուղներ կը բերէր և հաս-
տատուն հիմքեր կունենար, քան թէ այ-
ժմ, երբ մեր թատրոնը քայքայվելու վը-
րա է:

Ամեն բան մի կողմ թողնելով, արդէն
միայն այս օրերում կատարված իրողու-
թիւնը, զէպի օր. Աստղիկը մեր թատրո-
նական գործիչների կողմից ցոյց տուած
սառնութիւնը և արհամարհանքը մի սար-
սափելի արհամարհական կնիք է դնում
թատրոնական գործիչների վրա:

Այն դերասանուհին, որ մի ճշմարիտ
բաւականութիւն էր տալիս մեզ թատրոնի
բեմից, տարի ու կէս աւելի շարունակ,
սկսում է արհամարիվել թատրոնական գոր-
ծիչների կողմից այս տարուան սկզբներից,
չը ստանալով ոչ դեր և ոչ բենեֆիս, այն-
պէս որ իր պարտքերից ազատվելու հա-
մար օր. Աստղիկը ստիպված էր մի կոնցերտ
տալու ամիս 15-ին Արժ Բոսնիում թատ-
րոնում, մասնակցութիւն ևս մը վը-
րացի դերասանուհի հետ, հայ
թատրոնի աստիճանի բարձր (մշտական հայ
թատրոնական խմբին չը պատկանող) և

մի քանի պատահական անձանց:
Ուր էին այն զիշեր իր թատրոնական ըն-
կերակիցները, որոնց բենեֆիսներում օր. Աս-
տղիկը իր սովորական ջերմեւանդութեամբ,
զուաւր յետ դրած, մանաւանդ էր. ինչո՞ւ
պիտի մի այլ տեղ լինէր նրա կոնցերտը,
քանի որ մեր թատրոնական մշտական խմբ-
ի ներկայացուցիչներ լինում են Պալմի թատ-
րոնում:

Այս հարցերին պատասխան տուող պիտի
ասի որ այդ բոլորի պատճառ եղել են մեր
մշտական թատրոնական խմբի ցրտաւարե-
րը, որոնք ոչ իրանք էին ներկայ այդ կոն-
ցերտին, ոչ թող էին տուել տալ մեծ թատ-
րոնը և սաստկապէս սաստել էին մեր բո-
լոր դերասաններին և դերասանուհիներին
չը մանաւանդ:

Պէտք էր ներկայ գտնվել ամիս 15-ին
Արժ Բոսնիում թատրոնում Աստղիկի կոնցերտին,
որ կարելի լինէր հասկանալ, թէ ի՞նչ ա-
սել է իր սիրած դերասանուհի հետ գործ
ունենալը: Առանց շարաթիւնով պատրաս-
տութիւններ տեսնելու (ինչպէս, ասում են,
տեղի է ունեցել ուրիշ բենեֆիսների վերա-
բերութեամբ), թատրոնի դաշխիւր լցվե-
ցաւ բազմաթիւ հանդիսականներով և դա-
շխիւր զգրվեցաւ նրանց անկեղծ զգա-
մունքների արտայայտութիւններով: Ամեն
մի բառ սրտից էր, ամեն մի շարժում
բնագրումով էր և ոչ միւսների բովանդակով:

Այո՛, մենք ճանապարհ ենք գցում օրի-
որդին լաւ զգացմունքներով, մեր աչքում
նա ոչինչ չը կորցրեց և անբաժան մնաց
մեզանից հոգեպէս: Բայց վայ թէ այդպի-
սի դերասաններին ի զուր տեղը մեր մշտա-
աւելի բարձր է, և այս պարագայիս մէջ կարեւոր
է զմեզ չըժպատող, մեզ հետ խառն եղող ժո-
ղովրդից ալ խնամակալ ըլլամք, ծանրութեան
կեղծին մը ըլլալով գանդի ի մեջ ձգենք: Վը-
չակ՝ այս ամսին պէտք եղած զգալիարները
յայտնած է, մենք ուշադրութիւն կը հրաւիրեմք
այն յօդուածներուն վրայ այս պահուս, երբ դեռ
քով վառուած թիւրքերն իսկ թէ քիւրդ և թէ այլ
ժողովրդից կարեւորութիւնը կըմբռնեն. ապագան
ոչ միայն ամենէն իմաստունին է, այլ քիչ մ'ալ
կանուխ արթնցողին:

Ճէրիտ է յօդուածին մէջ աչքի դարձելու
ուրիշ կէտ մ'ալ. պ. Նիկողոսեանին հայ թիւթի
մը խմբագրիչներէն մին մենամարտութեան հրաւի-
րելէն քաղաքական հետեւութիւններ կը հանէ: Ըստ
Ճէրիտ է Տփղիսի հայ բովանդակներու իբր կեղ-
րոն մ'է ուստի կը պատրաստուի թիւթական Հա-
յաստանի վտանգը ամիս մենք ապահով նստած
ենք, կըսէ Ճէրիտ է, հայ Զանքոֆներ 35 տարի
է կաշխատեն գուցէ զմեզ յանկարծակի բերե-
լու: Թիւթը թիւթը սարսափահար եղած, կերդ-
մնցնէ կառավարութիւնը որ մէկ կողմէ չուտով
բարեկարգութիւններ փութացնէ, որպէս զի վը-
տանգի առջեւ առնէ, միւս կողմէ քանայ որ Ռու-
սիոյ և թիւթից հայոց մէջ յարաբերութիւնը
զաղրկին: Թիւթաց այս սարսափը պարզ է, մեկ-
նութեանց կարօտ չէ. քանի որ իրենց առջեւ կը
տեսնեն ոչխարաբարոյ ժողովուրդ մը, որ իր պան-
ծանաց տիտղոսներուն մէջ կը դնէ հինգ հարիւր
տարիներու անասան հաւատարմութիւն մը առ-
օսմանեան վեհապանդ գահակալութիւնը, կիջեց-
նեն այդ յիմար խեղճին զլիւսն լախտի հարուած-
ներն, հարուածներ, որոնք մեր հայրերուն շատ
ախորժելի եղած էին, վասն զի միթէ նուիրա-
կան աւանդութիւն չէր մեր մէջ Վաստեալ օս-
մանցուն թօփու զը պակաս չընէ զըլինուս:—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՍԻՍ

Կ. Պոլսի, 17 յունիս

Տաճիկ մամուլը՝ պարագլուխ ունենալով վա-
ղըթ, իր փափաղները իրականութեան տեղ կառ-
նու, Ռուսիոյ հայոց գրութիւնը իբր ամենափա-
թար կը ներկայացնէ, կը յայտարարէ թէ նոցա
զուլաները կարի իսկ տարցած է և կը հետեցնէ
թէ Ռուսիա ալ կը տեսնէ որ թիւթից հայոց
բարեկարգութեան խնդիր յարուցանելն իրեն իսկ
ֆեասակար պիտի ըլլայ, և վաղըթ կուրախա-
նայ որ Ռուսիա Հայաստանի բարեկարգութիւնը
ընելով չը պիտի տագնապէ թիւթերը, իսկ մենք
թիւթը թիւթերու մեզ տարած լարանները լաւ
տեսնելով, չենք ուզեր մէջը իյնալ և կը շարու-
նակենք յոյսով ու հաւատքով ապրել,
փափաղելով որ Ռուսիոյ Կ. Պոլսից գեապանը
շատ վերադառնայ ի Կ. Պոլսի, և միասին բերէ
նոր հրահանգներ, որով Անդրիոյ գեապան լուր

Տեղեկն ձեռքերը ծալած չը նստի հայոց հարցի
համար:

Չենք ուզեր ալ երկար խօսել այն ժողովնե-
րուն վրայ, որ կը գումարին թէ ի պաշտան ար-
քունի և թէ ի Բ. Գուռն, Ասիոյ բարեկարգու-
թեանց ծրագիր մը պատրաստելու համար, զի
այլ ևս ոչ տարակոյս ունի որ թիւթաց պատրաս-
տած բարեկարգութիւնը միշտ նկատած են օրէցօր
Ասիոյ մէջ իսլամ տարրը զօրացնել և հայ տարրը
սկրաքանել: Կը լսեմք թէ Բ. Գուռն Կարապետեան
տէրութիւնէ մը այնպիսի ապահով տեղեկութիւն-
ներ ստացած է, որ կրնայ հանգիստ ըլլալ թէ առ
այժմ հայկական հարց մը ճաճկատան տակն ու
վրայ պիտի չընէ: Ուրիշն կրնան տաճիկները
կամաց կամաց շարժիլ: Կուզէք գաղափար մը
ունենալ թէ վերջին ատեններս Սուլթանի կա-
ռավարութիւնը ինչ իմաստով կըմբռնէ քրիս-
տոնէից և իսլամաց հաւատարմութիւնը և բարե-
նորոգմանց խնդիրն, ահա կը ներկայացնենք Հա-
յաստանէն եկած պաշտօնական նամակէ մը հե-
տեւալ քաղուածքներն:

Վասն ընդհանուր դատախազի փոխանորդ
Տիւրքմենի Գալիօր Էֆենդի պաշտօնանկ եղաւ,
վասն զի բողոքած էր ընդդէմ Սուլթի կառավար-
չին, որ կը չարաբէր Ալվարիճ գիւղի հայերը:
Պայազեանի եղեւնադատ ատենանի նախագահ Գա-
լուստ Էֆենդի Մարտիկեան տեսնելով որ Պայա-
զեանի կառավարչին ապօրէն ընթացքի դէմ իր
ըրած բողոքներուն կարեւորութիւն չը տրուիր,
հրաժարական տուաւ, և իր տեղը տաճիկ մը ան-
ցաւ: Գալիօր Էֆենդի Բովասափեան, որ Երզրումի
վաճառականական ատենանի նախագահ օրո-
շուած էր, հաղիւ թէ նոյն ատենանին պարզ ան-
գամ մը կըցաւ մնալ, վասն զի վալին գանազան
նենդութիւններ ըրաւ մինչև ի Կ. Պոլսի իսկ, ո-
րով նախաւ շահութիւնը տաճիկի մը յանձնուեցաւ:

Կատական քննիչ—այցելուն թէպէտ Կիրակոս Է-
ֆենդի Ղազանճեանը երզնկայի եղեւնադատ ա-
տենանին նախագահ օրոշած էր, բայց վալին մեր-
ժեց այս ընտրութիւնը և Կ. Պոլսէն ընդունած
հրահանգներուն համաձայն տաճիկ մը ընտրեց—
Վալիս Էֆենդի Ներսիսեան օգնական ընդհա-
նուր դատախազին Երզրումի պաշտօնէն զրկուե-
լու վրայ է, վասն զի իրեն դէմ անհիմն կասկած-
ներ և չարակամ ամբաստանութիւններ կան, և
իրեն յաջորդը թիւթը մը պիտի ըլլայ կըսեն—
Նոյնպէս լուր տարածուած է որ Փիլիպպոս Է-
ֆենդի, Բաքերտի ընդհ. դատախազի փոխանորդ,
պաշտօնանկ պիտի ըլլայ, և յաջորդը տաճիկ մը
պիտի ըլլայ:—Ահա այսպէսով առ այժմ ամբողջ
Երզրումի նահանգին մէջ արդարութեան ատենա-
ներու քրիստոնեայ պաշտօնեայ մը չունենք:

Ահա իրերը կը խօսին, և սակայն Ճէրիտ էն,
որ թիւթաց բարձրագոյն դատի կարծեաց արձա-
գանքը կը համարուի, յոյսեր կը յայտնէ և ծը-
րագիրներ կառաջարկէ—Ճէրիտ է ի առաջար-
կած ծրագրին մէջ ուշադրութեան արժանի է
այն կէտն, որով քիւրդերն իրենք թիւթերն կըր-
թել կը յանձնարարէ. միթէ թիւթերն իրենք
զիրենք կրթելու կարող են, որ ուրիշներու դա-
տախազութեան հոգն ալ առնեն: Թիւթը թիւթը
այս բանն շատ աղէկ գիտէ, բայց ինչ ընէ, կը
վախնայ որ քիւրդերն մեր ազդեցութեան ներքե
կիյնան և մեզմէ կարողալ գրել սորվելով բոլոր-
վին մեզ հետ կըլլան: Այս կէտին վրայ պէտք
չէ մտածեն արդեօք անոնք, որ Հայաստանի դա-
տախազութիւնը ստանձնած են: Հայաստանի
մէջ կարողալ գրել և ուսմունք տարածելու աշ-
խատած ժամանակնիս միթէ մեր նպատակը լոկ
քանի մը հարիւր հայ լուսաւորել է. այն ժաման-
ակ այնչափ աղմուկ չարժէր. իսկ ընդհանրապէս
մենք համոզուած եմք որ աղղին նպատակը շատ

Հայրենիք սկսած է Ազգ. վարչութեան վրայ քննադատութիւններ հրատարակել, իսկ երեսփոխանական ժողովը երբ քննադատութեանց առարկայ պիտի ըլլայ: Ամսոյս 11-ին երեսփոխանական ժողովը ներկայ շրջանին Գ. Նիսաբ ըրաւ. բաւական նոր երեսփոխաններ ընտրուած էին. ժողովին ընդհանուր կերպարանքը գոնացուցէ՛ էր. վերջի՛ ընտրութիւններն հայ էֆէնդիները հեռու պահած են, հաղիւ մէկ երկու փոքրիկներ կրցած են սպրդել, բայց առնչուտ պիտի նային որ անոնք ալ կրաւորական դիրքէ գոյս չելլեն: Առաւովարութեան և ազգին շահերը համաձայնեցնելու միջոց մը դեռ չէ գտնուած, ինչ որ միոյն օգտակար է, միւսին ֆեասակար կը սեպուի, և այս ալ Գրան համոզմամբն է: Ազգանի որ հայ մը ազգային խնդրոց մէջ ազգին շահուց համաձայն գործելու ատեն տեսնէ որ իր կառավարութեան հակառակ կը շարժի, հետեւեալ իր անձին ֆեասակար, բնական է որ ազգին և իր անձին շահը սկսի բազդադել: Ազգին գործոց մէջ գտնուողները պէտք չէ որ այսպիսի փորձութեան մը ենթակայ ըլլան:-- Ազգ. ժողովը տարուան մէջ գրեթէ 20—25 նիստ հաղել կրնէ, որոց մեծ մասը ատենական գործողութեամբք կանցնէ, իսկ ազգին կենսական խնդրոց վրայ մտածելու ժամանակ չը ֆնար, և զի տարի է դեռ կարող չիղաւ ժողովը այնպիսի ընթացքի մը մէջ մտնել, որ քիչ ժամանակի մէջ կարենայ չառ գործ տեսնել: Երկու նիստէ կը տեսնենք որ այնպիսի խնդրով մը ժամանակ կանցնէ որ արդէն լուծուած պիտի ըլլար. որոնք պիտի մամնակցին ընտրութեան, օդու այս չէ որոշուած, և ինչպէս նախորդով ըսինք, երիտաւորէ մը, պ. Մանավեան կը բողբոքի իրեն իրաւունքները բռնաբարուած են ըսելով: Ա

կան բազմաթիւ ընտանիքներ փախուցման հիւսիսային Ալբանիա, վախենալով զինուորական ծառայութենէն, որ պէտք է կատարեն նրանց որդիքը: Մնացել են միայն այն մահամետականները, որոնք կարող են գէնք գործածել և դուռ յոյս ունեն ընդգրկմարդի Գոննաստանին:

Այլ տեղեկութիւններ համեմատ Արտան ամրացնելու համար աշխատանքները շարունակուում են: Արտայի և Պրեփեզայի մէջ գտնուում են 15,000 թիւրքաց զօրքեր 74 թնդանթներով: Արտան գրաւելու համար նշանակված յունական զօրաբաժինը կենտրոնացած է Պրեփեզայի հարաւային կողմը: Յոյները վախենում են մահամետականների ընդգրկմարդութենից:

ԳԵՐՄԱՆԻԱ

Ընտրողական ցոյցերը Գերմանիայի մէջ արդէն սկսված են: Ինքն իշխան Բիսմարկ նրանց մասնակցեց, հրատարակելով մի շարք ծառայական, որով նա պատասխանեց մի նահանգական երկրագործական ժողովի համակրական հեռագրին: Բիսմարկ խորհուրդ է տալիս այնպիսի կանգնողականներին ընտրել, որոնք համակրում են նրա անտեսական քաղաքականութեանը, որի նպատակն է պաշտպանել «ազգային արդիւնաբերող աշխատանքը» և թեթեւացնել ուղղակի հարկերը: Այդ յայտնութեան մէջ ասված է, որ ուղղակի հարկերի թեթեւացնելով կը մեծանան կողմնակի հարկերը հաւասարութիւն պահպանելու համար և հետեւաբար ժողովրդի զրուծիւնը զրանով չի բարելաւվի: Ինչ կը վերաբերի ազգային արդիւնաբերութեան պաշտպանութեանը, այդ գործը կարելի է կատարել, արհեստական ճանապարհով տեղային վատ արդիւնաբերութիւնները թանկացնելով և արտասահմանից բերվող արդիւնաբերութիւնների մրցումը դժուարացնելով: Այդ պաշտպանութիւնն էլ դարձնալ ոչինչ չէ տալիս ժողովրդին լացի ընդհանուր թանգութիւնը և արդիւնաբերութիւնը:

Լանդերու երկիրներ, գուցէ քանի մը նիստ ալ այս խնդիրը գրաւէ: Տարբերակութիւնը սա է որ, ծերունի երեսփոխանին մէջ ժողովէն վերջը կը յայտնէր թէ երկու տարի առաջ ալ այս երկրասարդը այս բողոքը ըրաւ և ինչն այն օրն աստեղանակաւ ըլլալով խեղդած էր այդ խնդիրը, որոյ համար խիզը գինքը կը տանջէր (!) և հիմայ պիտի ջանայ իւր մեղքը քանել: Ահաւասիկ կը տեսնուի այսպիսի ամենապարզ խնդրոյ մը մէջ իսկ նենգութիւններ կընեն և մէջէն չեն կրնար ըլլալ:—Աստուած տայ որ այս տարւոյն ժողովը աւելի խելքը գրուի աշխատի, բարի տրամադրութիւններ ունեցած ըլլալին յայտնի կերպի:—Ժողովը քուէից գրեթէ միաձայնութեամբ իրեն նախագահ ընտրեց պ. Գարուիլին: Արքիէպիսկոպոս Այս երկրասարդի անունը վաղուց է ծանօթ «Մշակի» ընթերցողաց, ճարտար մարդ, ժողովի կառավարելու յատկութիւն ունեցող, աղէկ խորհող, աղէկ խօսող:—Ժողովի խնդիր մ'ալ ունեն այս օրերս Կ. Պոլսոյ հռոմէական հայր: Հասունի յաջորդը ընտրելու հրամանադրը Բ. Գոննէն հաղորդուեցաւ հռոմէական հայոց պատրիարքարանը և 18 ընտրելեաց ցուցակ մը պատրաստուած է: Հռոմէն ամեն ջանք կըլլայ որ Աղաբեան գերապաշտը ընտրուի: Աղաբեան Հասունի alter ego կը սեպուի: Ժողովուրդի մէջ իրեն համակիր եղողները շատ չեն, բայց ամենէն հաւանական անոր ընտրութիւնն է: Արդէն հայ հռոմէական կղերի մէջ այս պաշտօնը արժանապէս կատարելու շատ արժանաւորներ չը կան: Հռոմէն բռնադատեցին երեք եպիսկոպոսներ, որոց մէջն է նաև Էրզրումի եպիսկոպոսը, որ առաջնորդն էր Երզրումի ընտրելու ըլլալէ հրաժարական տան, այնպէս որ այս երեքին քաջաբերովը մէջտեղը կարող ուրիշ մարդ չը մնար, բայց միայն Աղա-

նաբեական անաջողութիւնները: Այնու առաջինը գիւղացիների մեծամասնութեան համար «ուղղակի հարկերի թեթեւացնել» նախագիծը շատ զուրկան է, իսկ արհեստների և երկրագործութեան մասին ակնարկութիւնը առեւտրի հակառակ կը շարժորթի բանւորներին, որոնք թշնամարար են վերաբերվում առեւտրական դասին: Ընդհանուր գործածութեան առարկաների մասին հարկերի նախագիծները մոռացված են և նրանց մինչև անգամ պաշտօնական լրագիրները չեն յիշում: Բանւորներին ապահովելու մասին օրէնքը, որ փոփոխվեցաւ պարլամենտից, նոյնպէս մի կողմն է թողած: Մինչև անգամ նա ամբողջութեամբ մերժվեցաւ միացեալ խորհուրդից, ուր տիրապետում է Բիսմարկի ազդեցութիւնը: Դրանց տեղ առաջ են բերվում 10 տարի առաջ սկսած ընդարձակ հասարակական ձեռնարկութիւններ ընտրողներին շրջանելու համար:

Ընդգրկմարդական կուսակցութիւնն էլ հանգիստ չէ մնում և խիստ քննադատութեան է ենթարկւում կառավարչական նախագիծները: Մօտ ապագան ցոյց կը տայ, թէ ընտրութիւնների ժամանակ որ կողմը յաղթող կը մնայ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Նեստորական ժողովրդեան փիճակը լրջօրէն գրադեցուցած է Անդլիոյ մարդասէր կառավարութեան ուշադրութիւնը: Խնդիր է թէ Անգլիոյ կառավարութիւնն իրական բարիք կրնայ ընել, կամ մինչև ցարդ ըրած է այն ժողովրդոց՝ որոց փիճակին կը համակրի մերթ ընդ մերթ: Պատասխանն ինչ որ ալ լինի, առ այժմ Ուրմիոյ գաւառին (ի Պարսկաստան) Նեստորական հասարակութիւնն այդ կարի նախնիների փիճակին մէջ կերելի: Անգլիոյ մէջ անցեալ շաբթու Կապոյտ Տեսուակ մը հրատարակեցաւ այդ Նեստորականաց վրայ: Լորտ Կրանվիլ 1880 օգոստոս 31-ին Թէհրանի Անգլիական դես-

թեանը: Բայց և այնպէս աւելի լաւ պիտի սեպեն անոր յանձնել քան թէ անկարող անձի մը իրենց գործոց ղեկը, մասնաւորապէս որ Հռոմի պաշտպանութիւնն ալ կը վաշխէ, որ մեծ բան ըսել է:—Ուրմին ինչ տարբերութիւն Պատրիարքին ուղղակի Հռոմէն կամ ժողովուրդէն ընտրուելու մէջ, պարզ ձեւակերպութիւն մը:—Կեռ կայ հակահաստեան փոքրիկ մաս մը որ չէ հնազանդած: Նոր ընտրուող Պատրիարքը, իւր ժողովուրդին ղրգմամբ, արդեօք պիտի աշխատի ազգային դատի պաշտպանութեանը, կամ թէ չգործ ղրգը մը պիտի բռնէ, և այս չէզոքութիւնը իսկ գահացոյցից կ'լլայ: Միշտ մեր մէջ երկիւղները չեն փարատած որ Հռոմէն միքեռայութիւնների և նենգութիւնների կըլլան հայոց յարուցած խնդիրը խեղտելու համար: Հռոմէական հայոց մեծամասնութիւնը անշուշտ այս գաղափարէն չէ, բայց իշխանութեան տէրը ինքն չէ, յանուն իրեն կը խօսեն և կը գործեն կարգիւնները: Ինչն լոկ խնամքի ներքէն է: Յրանապի դեսպանատան ներկայ վարիչը Մանթօլուն կ'ուրը Պատրիարքարանի ացելութեան եկաւ: զեսպանը բացակայ է: Բաւական երկար տեսակցութիւն մը ունեցաւ, բայց կարեւոր բան մը չը կայ: Նոյն օրը հռոմէական հայոց և յունաց Պատրիարքարաններուն ալ այցելութիւն տուած է: Արքիէպիսկոպոսը գրեցին որ լորդ Տեֆթէն Պատրիարքին փոխարինած այցելութիւն տուաւ, բայց սխալ է, դեռ չէ եկած:

Անգլիոյ դեսպանատան օրդանը սեպուած և մեծ կարեւորութիւն ունեցող Մէսէն ճըր, որ ի վաշխ է Զէրալդի տեղ կը հրատարակուէր, ջնջուեցաւ կառավարութեան հրամանաւ, որով հեռու Աղիզի գաղափարներ վրա տեղեկութիւններ հաղորդած էր: Կառավարութիւնը ատենէն ի վեր էր որ աղէկ աչքով չէր դիտել այս թեր-

պան Պ. Թոմարի կը հաղորդէ Վեհ. Թագուհին մի պատգամագիրն ուղղեալ առ Վեհ. Շահին, որով Թագուհին իւր փափաքները կը յայտնէ Նեստորական հասարակութեան բարեկեցութեան համար, և կը յուսայ որ Վեհ. Շահին պաշտպանութիւնը պիտի ընդունին: 1880 հոկտ. 12-ին Պ. Թոմարն կը պատասխանէ թէ ինք Վեհ. Թագուհին խօսքերը Շահին հաղորդեց, և սա խոստացաւ ազգու միջոցներ ձեռք առնուլ տեղի ունեցած գանգատները բաւաւոր համար: Իւր յաջորդ տեղեկագրով, որ 1881 փետր. 15-ին թուականը կը կրէր, Պ. Թոմարն Պարսից կառավարութեան հետ իւր բանակցութիւնները կը պատմէ, և ներփակալ կը զրկէ Նեստորականաց գանգատներուն վերաբերեալ կանոնադրութեան մը պատճէնն, 1864 թուականաւ, որ վերահաստատուած է 1881 յունվարին: Պ. Թոմարն Նեստորական հասարակութեան գանգատներուն վերջ տալու նպատակաւ ձեռք բերուած այս զիջումները գոհացուցիչ կը նկատէ, և կը յուսայ թէ Նեստորականաց փիճակը մեծապէս պիտի բարեօրէն անոնցով: Լորտ Կրանվիլ ալ կը շնորհաւորէ զՊ. Թոմարն իւր ձեռք բերած յաջողութեան համար:

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 25 յունիսի: Պաշտօնապէս հաղորդում են. երէկ Թագաւոր Կայսրը ընդունեց պարսից շահի արտաքց կարգի դեսպան և լիազօր մինիստր Միրզա Ասեդուլլա խանին, որ յանձնեց Թագաւորին իր հաւատարմութիւնը: «Голосъ» լրագրին հաղորդում են խաղովից յունիսի 24-ից. Այստեղի բանկի գործերը չափազանց խրճճված են: Յայտնվել են մեծ քանակութեամբ անյուսալի պարտքեր, որոնց թուում նշանաւոր տեղ է բռնում բանկի գիրքիտօր Նիկիտինի 100,000 ռ. պարտքը: Երկրաչափ Գրեներդ ատաջապեց այստեղի քաղաքային փարչութեանը:

Թին գործածած խիստ լեզուն, մասնաւորապէս որ լորդ Տեֆթէն եկած է, ձայնը շատ բարձրացուցած էր: Այս թերթը անգլիկէն և զաղղիներէն էր, Կ. Պոլսոյ թերթերուն մէջէն այս միայն Անգլիոյ մէջ տարածված էր, ուստի ի խոհմտութիւն էր գնա պատրուակաւ մը լռեցնելն: Թերթն յիշէր որ Մէսէն ճըրի նախորդը ի վաշխ չէր հայոց դատին առթիւ գրած մէկ նշանաւոր յօդուածին համար էր որ ջնջուեցաւ: Ամեն ատեն առօրեայ խնդիրներն երբ գրելու կեղեմք ժամանակը կանցնի և ատեն չը մնար ազգային ուրիշ դանազան խնդրոց վրա խօսել: Երկրորդ նամակին կը թողուէր, դարձեալ նոյնը կըլլայ: Անշուշտ «Մշակի» ընթերցողը կուզեն տեղեկութիւններ ստանալ Միացեալ ընկերութեանց վրա, որոյ հետ այնքան կապի լով կապուած են, մասնաւորապէս որ գործոց ղեկը այն պատուական երկրասարդին ձեռքը անցաւ, որ ազգային ամենաբարձր խնդրոյն մէջ կատարած նշանաւոր դիմումը ազգին համարմանը և համակրանացը արժանացած է: Պ. Չերափի անունը ինքնին նշանակութիւն մը ունի և երբ Միացեալ ընկերութեանց գլուխը կանցնի ներկայ պարագայից մէջ, այդ նշանակութիւնը ուրիշ կարեւորութիւն մը կը ստանայ: Կը լսեմք թէ նոյն իսկ դեսպանական շրջանակներու մէջ բաւական ուշադրութեամբ առնուած է այս կէտը: Թէ հայկական ինքնօրինութեան խնդրոյն մէջ ամենէն առաջ նետուող երկրասարդը, որ միանգամայն Նեքսէսի ալ բաղուէն է, այնպիսի մարմնոյ մը գլուխ ընել, որ գրկած է Հայաստանը և Կիլիկիան, առանց մտածութեան չէ և թէ կրնայ հետեւութիւններ ունենալ: Ինչ ընենք, պարոն գիրքումները, միշտ լսեմք ու ձեր գրութեանը ուղաւեւը, ալ քիչ մ'ալ մենք մեր գլխուն ճարը պիտի մտածենք: Եթէ դուք մեղի

կազմել Խաղովի ջրանցքների նախագիծը: ՉԵՐՆԻԳՈՎ, 24 յունիսի: Տօնախմբուած շատ լաւ անցաւ: Քաղաքի մէջ բոլոր ժամանակ կատարեալ հանգստութիւն էր տիրում:

ԲԵԼԳԻԱ, 24 յունիսի: Իշխան Միլան շնորհեց ունգարական մինիստր-նախագահ Տիսսային Տակօֆա շքանշանը առաջին կարգի: Բիստիչ և Միլայիովիչ նախկին մինիստրները թոշակ կը ստանան: Իշխանի այստեղ վերադառնալոց յետոյ սերբիական զիպլոմատիան մեծ փոփոխութիւնների կենթարկվի:

ՍՕՖԻԱ, 24 յունիսի: Ասում են, որ ազգային մեծ ժողովի բացումը կը յետաձգվի մինչև յուլիսի 10-ը: Մի քանիսը կարծում են, որ ժողովը բոլորովին չի բացվի:

ԼՕՆԳՈՆ, 24 յունիսի: Ստացված է տեղեկութիւն, որ Բ. Գոննէն հինգ զրահակիր նաւեր է ուղարկել Տրիպոլի տեղական արարների մէջ կարգապահութիւնը պահպանելու համար և, եթէ հարկաւոր լինի, բողոքելու Տրիպոլին օտարներից նաւաճելու դէմ:

ՓԱՐԻՋ, 24 յունիսի: Ֆրանսիայի և Թիւրքիայի յարաբերութիւնները հետզհետէ լարված բնուորութիւն են ստանում: Սուլթանը հրաժարական ընդունելութիւն չարաւ Տիսսօֆին Պատմում են, թէ սուլթանը ասել է. այդ մարդուն ես այլ ես երբէք տեսնել չեմ կամենում: Այդ բանը իմանալով, Տիսսօ իր թէ նկատել է. սուլթանը փորձով կիմանայ, թէ ինչ կը նշանակէ մեծ պետութեան հետ վեճ սկսելը:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 25 յունիսի: Պետական բանկի 5% տոմսով առաջին շրջանի արժէ 95 ռ., երկրորդ 94 ռ. 25 կ., երրորդ 94 ռ. 50 կ., չորրորդ 94 ռ. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ռ., երկրորդ 220 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. 37 կ., երկրորդ 92 ռ. 12 կ., երրորդ 92 ռ. 37 կ., ասի 7 ռ. 84 կ.: Ռուսաց մի ռուբլ Լժիգոնի վրա արժէ 24,94 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 214 մարկ, 12 պֆ., Փարիզի վրա արժէ 264 ֆրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ժառայութիւն մը պիտի ընէք շնորհագրատ կըլլանք, բայց մենք ալ քիչ մ'ալ մենք մեղի աշխատելու արամաղիր ենք:

Ուրիշ նամակում պիտի ներկայացնենք Ռուսիոյ հայոց Միացեալ ընկերութեանց արդի վիճակը, և Ռուսիոյ եղբայր ինչպէս նիւթական նոյն և բարոյական աջակցութիւնը ու խորհուրդներն պիտի խնդրենք: Ամենքս միասին պէտք է գործենք, և փոխադարձ կարծեաց գոհողութիւններով, կամ լաւ եւ համաձայնութեամբ, կրնանք շատ բաներ ընել: «Մշակ» որ Հայաստանի մէջ գործելու, հոյ գաղափարակութիւնը ծաւալելու առաջին ձայնը տուաւ, և միշտ այդ սկզբունքի դրօշակը բարձր բռնեց, մեծացուց: Արարատեանք, ի մի խմբից այն անջատ մարմինները որ Հայաստանի և Կիլիկիոյ մէջ կաշխատելին առանձին առանձին, անշուշտ «Մշակ» պիտի շարունակէ Միացեալ ընկերութեանց միտքը ըլլալ: Ունենք թերութիւններ, կրնանք ուղղել: Ինչպէս փորձով տեսած էք, մենք մեր վրա յանդուգն փառհաւթիւն չունինք, խորհուրդներու ունեղիւր ըլլալ, ազգային կարծեաց համաձայն երթալ այս մեր սկզբունքն եղած է, և ամենէն աւելի «Մշակ» կրնայ խրդճով վկայել թէ ինչ աստիճան ազգային ընկերութիւնք իրեն կարծեացը փառհաւթիւն յայտնած են և գործադրած են: Հետեւաբար այսուհետ իսկ հաւատք ունիմք թէ «Մշակ» և թէ Ռուսիոյ հայ մամուլն վրա առ հաւատարակ: Ուրիշն ի տեսութիւն այս խնդրոյն համար:

Հայկակ